



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**ԲԴԽ-7-Ո-29**  
**2019թ.**

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասը, 89-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետը, 94-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Սահմանել դատավորի անձնական գործում ներառվող այլ տեղեկությունները՝ համաձայն հավելվածի:
2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 10-րդ մասի հիմքով՝ իրավունքի ուժով, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի՝ 2007 թվականի հոկտեմբերի 16-ի «Դատավորի անձնական գործը պարունակող այլ տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 14Լ որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
4. Սույն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի պահանջը կիրառվում է 2020 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**2019թ. հունվարի 31**  
**ք. Երևան**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Հավելված**  
**Հայաստանի Հանրապետության**  
**բարձրագույն դատական խորհրդի**  
**2019թ. հունվարի 31-ի**  
**թիվ ԲԴԽ-7-Ո-29 որոշման**

**ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Անձնական գործը պարունակում է հետևյալ այլ տեղեկությունները՝

1) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ.

2) նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարության փաստաթղթի պատճենը՝ իր դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին.

3) ինքնակենսագրական տվյալներ պարունակող քարտը, որն առնվազն բովանդակում է դատավորի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, քաղաքացիությունը, կրթությունը (որտեղ, երբ և որ ուսումնական հաստատությունն է ավարտել), աշխատանքային գործունեության սկիզբը, մի աշխատանքից մյուսին անցնելը, զինվորական ծառայության մասին տեղեկությունները (առկայության դեպքում), ընտանեկան դրությունը (ծնողներ, ամուսին (կին), երեխաներ), ինքնակենսագրությունը գրելու տարին, ամիսը, ամսաթիվը և դատավորի ստորագրությունը.

4) անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճենները և էլեկտրոնային փոստի հասցեն.

5) երկու լուսանկար՝ 3X4 սմ չափսի.

6) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը.

7) օտար լեզուների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը.

8) արական սեռի անձանց՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճենը.

9) իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

10) գիտական աստիճան և գիտական կոչում շնորհելու մասին փաստաթղթերի

պատճենները՝ դրանց առկայության դեպքում.

11) պետական պարզևներով պարզևատրվելու, պատվավոր և հատուկ կոչումներ ստանալու, պետական մրցանակներ շնորհելու վերաբերյալ իրավական ակտերի պատճենները.

12) դատավորի ծառայողական վկայականի պատճենը.

13) դատավորին տրված հաշվեցուցակային զենք պահելու և կրելու թույլտվության պատճենը.

14) Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին Հանրապետության նախագահին առաջարկելու վերաբերյալ որոշման պատճենը.

15) դատավորի պաշտոնավարման ժամանակ նրա վերաբերյալ ընդունված անհատական իրավական ակտերի պատճենները.

16) անձնական թերթիկ (Ձև N 1)<sup>1</sup>.

17) դատավորի գույքի և եկամուտների հայտարարագրի պատճենը.

18) դատավորի նախաձեռնությամբ ներկայացվող այլ տեղեկություններ:

---

<sup>1</sup> Անձնական թերթիկի օգտագործման և ծանոթացման նկատմամբ կիրառելի են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները:

**ԱՆՁՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ**

1. Ազգանունը ----- լուսանկարի տեղ  
 Անունը ----- Հայրանունը ----- (3x4 չափի)
2. Սեռը -----
3. Ծննդյան ամսաթիվը -----
4. Ծննդյան վայրը -----  
 (մարզ, քաղաք, գյուղ)
5. Կրթությունը -----

N	Ուսումնական հաստատությունը		Ֆակուլտետի կամ բաժանմունքի անվանումը	Ընդունվելու տարին	Ավարտելու տարին	Մասնագիտությունը	Ինչ որակավորում է ստացել ուսումնական հաստատությունն ավարտելով	Դիպլոմի կամ վկայականի համարը
	Անվանումը	Վայրը						

6. Ինչ օտար լեզուների է տիրապետում -----

(կարդում և թարգմանում է բառարանով, կարդում է և կարող է բացատրվել, տիրապետում է ազատ)

7. Գիտական աստիճանը, գիտական կոչումը -----

8. Ինչպիսի գիտական աշխատություններ և գյուտեր ունի -----

9. Կատարած աշխատանքն աշխատանքային գործունեության սկզբից (ներառյալ ուսումը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, զինվորական ծառայությունը և աշխատանքը համատեղությամբ)

Այս կետը լրացնելիս պետական մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների անվանումները և գտնվելու վայրերն անհրաժեշտ է գրել այնպես, ինչպես դրանք կոչվել են աշխատելու ժամանակահատվածում

Ամսաթիվը		Պետական մարմնի, հիմնարկի և կազմակերպության		Պաշտոնը	Պետական ծառայության դասային աստիճանը
Ընդունվելու	Ազատվելու (ավարտելու)	Անվանումը	Գտնվելու վայրը		

10. Պետական պարգևներ և մրցանակներ -----

(երբ, ում կողմից և ինչով է պարգևատրվել)

11. Առնչությունը զինվորական ծառայության հետ-----

Զինվորական կոչումը -----

Կազմը -----

(հրամանատարական, քաղաքական, վարչական, տեխնիկական և այլն)

Զորքի տեսակը -----

12. Ընտանեկան դրությունն անձնական թերթիկը լրացնելու պահին -----

(թվարկել ընտանիքի անդամներին (ծնողներ, ամուսին (կին), երեխաներ)՝ նշելով նրանց ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը)

---

---

---

13. Բնակության վայրը -----

14. Հաշվառման վայրը -----

(լրացվում է, եթե տարբերվում է բնակության վայրից)

15. Բնակարանային, աշխատանքային, բջջային հեռախոսահամարները-----

16. Էլեկտրոնային փոստի հասցեն -----

17. Անձնագիրը (անձը հաստատող փաստաթուղթը) -----

(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

20\_\_\_\_ թ. «-----» «-----»

Անձնական  
ստորագրությունը

Անձնական թերթիկը լրացնողը պարտավոր է հետագա բոլոր փոփոխությունների մասին հայրնել Դատական դեպարտամենտ: